



ՈՉ-ՑԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱՆ ԿՐԾՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԻ

**AVEDARANI TSAIN**

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Արտոմատէ՛ր՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ. —:— Propr. Rev. K. T. SARIAN

Բ. ՏԱՐԻ

ՓԵՏՐՈՒԱՐ 1940

ԹԻԻ 2



«Տէրոյր եղեռնակը քառ Յովսէփի,  
Եղիւ առ մանուկը ու իր մայրը, և Եղիպտոս փախիւ»:

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս քանի մը տարիներէ ի վեր սովորութիւն եղած էր այս տարի ալ Աշխարհի Աւետ. Դաշնակցութեան կողմէ կազմակերպուած Եօթնեակի Ժողովները Գահիրէի մէջ տեղի ունեցան միասնաբար, միւս եկեղեցիներու մասնակցութեամբ, Հայ Աւետարանական Եկեղեցւոյ ժողովարանին մէջ (Էզպէթիյէ)։ Ինչպէս նաեւ Սբ. Ծննդեան պաշտամունքը Յունուար 6 ին, որուն հրաւիրուած էր խօսիլ թերթիս արտօնատէրը՝ Խուռն Բաղմութիւն մը ներկայ էր։

\*\*\*

Աղեքսանդրիոյ Հայ Աւետարանականները քանի մը տարիէ ի վեր ետեւէ են ունենալու իրենց սեփական եկեղեցական շէնքը։ Գեալնը գնուած է և նորին վեհ. Եգիպտական կառավարութիւնը բարեհաճած է շէնորհել շինուելու արտօնութիւնը։ Վեր. Ս. Մելքոնեան որ հովիւն է յիշեալ եկեղեցւոյն, Գահիրէ եկած էր արտօնագիրը ստանալու, այդ առթիւ քարոզեց տեղւոյս Հայ Աւետ. Եկեղեցւոյն մէջ։

\*\*\*

Մեծ ուրախութեամբ կ'արձանագրենք Պէյրութէն մեզի տեղեկագրուածը թէ Պէյրութի Էջրէֆիյէի Հայ Աւետ. եկեղեցիին մէջ տասնէ մը ի վեր հոգեւոր արթնութիւն տեղի կ'ունենայ և ապաշխարողներ կան։ Մաղթենք որ արթնութեան կայծը տարածուի ամէն տեղ, որուն այնքան պէտք կայ։

Մենք սիրով կը արամադրենք սիւնակ մը թերթիս մէջ եկեղեցական լուրերու, եթէ հրատարակութեան հա-

մար զրկուին անոնք մեզի թէ՛ Եգիպտոսի և թէ՛ արտասահման գտնուող եկեղեցիներէն և հոգեւոր կազմակերպութիւններէն։

## ՄՐՋԻՒՆԷՆ ՍՈՐՎԷ

Մարդ մը սեղան նստած կը ճաշէր, երբ վերջացուց գետնին վրայ տեսաւ մըջիւն մը։ Առաւ զայն և դրաւ պնակի մը վրայ ուր շաքար կար։ Անմիջապէս որ տեսաւ սսիկա չուտով գնաց և քիչ ժամանակ յետոյ կրկին վերադարձաւ շատ մը ընկերներու հետ միասին, զօրս տն հրաւիրած էր և որոնք հիմա երկար շտապով կու պային իր ետեւէն։

Այս մըջիւնները մեզի կու տան հրաւիրելու և հետեւելու օրինակ։ Մեր ընթերցողները կը հրաւիրենք հետեւելու այս մըջիւնին օրինակին որպէսզի այս տարի թէ՛ իրենք ճաշակեն «Աւետարանի Ձայն»ը թէ՛ հրաւիրեն ճաշակելու ուրիշները։ Եթէ իւրաքանչիւր ընթերցող բաժանորդ մը գտնէ, այս տարի աւելի երկար պիտի ըլլայ շարքը «Աւետարանի Ձայն»ին սարքած հոգեւոր խնջոյքի մասնակցողներուն։ Ոմանք ասիկա կ'ընան ընել նոր բաժանորդներ գտնելով, իսկ ոմանք՝ նուիրատուութիւն ընելով, զոր մենք կը գործածենք բաժնեգիրը վճարելու անկարողներուն, որոնք կը փափաքին ունենալ թերթը, և կ'ամ ուղղակի նուէր մը ընելով մէկ տարուան «Աւետարանի Ձայն» բարեկամներուն կ'ամ ողջակոններուն։ Նոր Տարւոյն համար լաւագոյն նուէրն է, ամբողջ տարուան մէջ նուիրատուն յիշեցնող։ Մենք ասիկա կ'սպասենք «Աւետարանի Ձայն»ի բոլոր բարեկամներէն և համակիրներէն։ Սորվինք մըջիւնէն և հետեւինք իր բարի օրինակին։

# ԱՒԵՏԱՐԱՆԻ ՁԱՅՆ

ՈԶ-ՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱԽ ԿՐԾՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

AVEDARANI TSAIN

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Արամատեր՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ —:— Propr. Rev. K. T. SARIAN

Խմբագիրներ՝  
Վեր. Խ. Թ. ՍԱՐԵԱՆ  
Վեր. Թ. ԷՈՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ  
Պր. Կ. Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՓԵՏՐՈՒԱՐ 1940

ԹԻԻ 2

## ԵՐԿՐՈՐԴ ՄՂՈՆԻ ՊԱՏԳԱՄԸ

Քրիստոսի ժամանակ սերուբիւններ տեղի տեղ զօր, պատերազմական պատար կամ ռազմամբեր փոխադրելու համար կը գործածէին «սուխրայ»-ի դուրբիւնը: Բանակներ զիւղերէն եւ ֆաղաֆներէն անցած ժամանակին կը հաւաքէին մարդիկ եւ անասուններ որպէսզի կառավարութեան համար ծառայեն ձիաբար: Անկից զաս քղթասարական արդի դուրբիւնը գոյութիւն չունէր, նամակներ կամ լուրեր կը ղրկուէին սուրհանդակներու միջոցաւ, եւ յանախ անոնք իրենց համբուն վրայ հանդիպած մարդիկը կ'ստիպէին որ իրենց գործը ձգելով քաղաւորին հրամանը կատարեն: Շատ հաւանական է՝ որ այդ հին դուրբիւնը դեռ գոյութիւն ունի յետամնաց ժողովուրդներու մէջ այժմ ալ: Արդ, մեր Տերը այս սովորութեան կ'ակնարկէր իր լեռան ֆարդին մէջ երբ կ'ըսէր. «Ով որ քեզ պահակ բռնէ ու մղոն մը համբայ քեզ, զնա անոր հետ երկու (Մատթ. 5. 41): Ժողովուրդը շատ լաւ կը հասկնար Յիսուսի սոյն խօսքերը, բայց ինչ որ տարօրինակ կը թուէր սա՛ ինչ որ Ան բան մըն ալ աւելի կը պահանջէր, մէկ մղոնը երկուքի կը բարձրացնէր:

Մեր Տերը, սակայն, նոր օրէնք մը չէր ֆարդեր զոր մարդիկ կամայ ակամայ ի գործ դնէին: Ան կը ֆարդէր *կեանք մը*: Ան բոլորովին կը ջնջէր ձեւի համար եղած օրէնքները, որոնք կը կատարուէին առանց սիրոյ, հարկադրանքի տակ, եւ իբր սահման ունէր մէկ մղոնը եւ անկէ անդին չէր անցնէր: Ան կը սորվեցնէր *կեանք մը՝ որ սէր, ուրախ սիրտ եւ յօժարաստութիւն կը ներմուծէր ծառայութեան մէջ*: Երկրորդ մղոնի այս կեանքը պէտք է ի յայտ գայ.—

Առաջին, *կեանքի դժբախտ պայմաններուն տակ*: Կեանքի նամբան միշտ հարթ չէ, ամեն ինչ միշտ փայլուն չընթանար, օդը միշտ պայծառ չըլլար, ձախորդութիւն, վիշտ եւ մտալիկի պարագաներ աւելի յանախ պիտի հանդիպին մեզի քան լաւ օրեր: Երբեմն պէտք պիտի ըլլայ անիրաւ մեկուսը կամֆին առջեւ համակերպիչ: Կարծես քեզ անոնք մղոններ են զորս ֆալելու հարկադրուած ենք: Ասիկա, անտարակոյս, չնշանակէր՝ քեզ մէկը չարիքի հանդիպած

ըլլալու պարագային անկէ ազատելու չաշխատի, ամենեւին: Պողոս կ'ըսէ ծառաներուն. «Եթէ կրնաս ազատ ըլլալ նախընտրեալ զայն»: Ասիկա շատ բնական է: Եթէ կրնաս մի' փախել այդ պարտադրուած մղոնը: Հապա սակայն, եթէ Տէրը քոյլատրեալ է որ փախել այդ մղոնը, այսինքն չարիք կրես, ցաւ կամ վիշտ ունենաս պէտք է ընդունիլ զանոնք ոչ թէ ակամայ, դառնութեամբ եւ փրփնջելով, այլ իբր քարի Հօրմէն քայլատրուած, սիրայօծար եւ ուրախութեամբ: Գիտ այդ մէկ մղոնը եւ անկէ աւելին, փախել երկրորդ մղոնն ալ: Ոչ թէ ցաւը կրել պղտորեալ անտարբերութեամբ, այլ անկէ աւելի բան մը ըրէ, ուրախացիր նեղութիւններուն մէջ, Տէրը փառաւորէ իրմէ եկած ամէն բանի համար: Աստուծոյ մարդոց համար այս բանը անկարելի է, դուն ապրէ Մեծ Օրինակիդ նման, փախել երկրորդ մղոնը:

*Երկրորդ, այս կեանքը պէտք է ի յայտ գայ մեր անկեղծայն կեանքին մէջ:* Այս կեանքը պէտք է կիրարկուի միայն դժբախտ պարագաներուն մէջ որոնք յաճախ կու գան մեր կամքէն անկախ պատճառներով: Մեր սովորական պարտականութիւններուն մէջ ալ պէտք է երեւան գայ երկրորդ մղոնի ոգին: Պատշաճեալ մը կը կատարէ իրեն յանձնուած գործը խղճմտօրէն ու հաւատարմօրէն: Ասիկա կ'ընէ որովհետեւ անկէ կու գայ իր ապրուստի միջոցը: Ասիկա մէկ մղոնի նման է, որ կը փախ, սակայն երկրորդ մղոնին կ'սկսի երբ իրմէ պահանջուածքն աւելի կ'ընէ իր յօժար կամքով: Երբ գործը ժամը 7 ին լըննայ աչիքը ժամացոյցին յառած չսպասեալ որ եօթը զարեւուն զխարկը դնելով դուրս վազէ, այլ որոշեալ ժամանակը կ'անցնի եւ տակաւին ան զբաղած է իր գործովը եւ ասիկա կ'ընէ արդի յօժարութեամբ: Առաջինը լաւ հաշուուած փարիսեցիական արդարութեան օրինակն է, երկրորդը՝ քրիստոնէական կեանք իր երկրորդ մղոնով, այսինքն՝ սիրով, անշահախնդրութիւնով, անձնագոհութեամբ: Եւ Յիսուս բաւաւ որ մեր արդարութիւնը փարիսեցիներուն արդարութենէն աւելի բան մը ըլլալու է:

*Երրորդ, այս կեանքը քրիստոնէութեան չափանիշն է:* Երկրորդ մղոնի կեանքին մէջ օրհնէ. պատուէր գոյութիւն չունին: Անկախ սիրոյ օրհնով կը կառավարուի կամ կ'ապրուի: Քրիստոնեայի մը համար «Ապանություն մի' ընեն» հրամանը չկայ, ս.ն ոչ թէ հրաժարած է սպաննելէն, այլ պատրաստ է երկրորդ մղոնը փախելու, այսինքն ներելու ալ իր բեւաւրին, ոչ թէ միայն շատեր այլ կը սիրէ ալ: Ան ոչ թէ շնորհիւն չընէ այլ պիղծ խորհուրդներ անգամ չսնուցաներ իր արտին մէջ: Ան մաքուր կը նայի, մաքուր կ'երեւակայէ: Ան ոչ թէ միայն չնախանձիր, այլ աւելի քան մըն ալ կ'առնէ եւ կ'ուրախանայ ուրիշներուն առաւելութիւններուն վրայ: Երկրորդ մղոնը փախելու քրիստոնեան ոչ միայն անձնատէր չըլլաւ, այլ ինքզինքը կը գոհի ուրիշներուն համար ալ: Այսպէս Քրիստոսի հետեւեալն փախելու մէկը ոչ թէ միայն այս աշխարհի եւ անոր հանդիմանութեան հետ գործ չունենար, այլ իր ուրախութիւնը կը գտնէ անձնուրացութեան եւ Քրիստոսի ծառայութեան մէջ: Միակ խորհուրդը Տէրը փառաւորել է, եւ ասոնք կ'ընէ ոչ թէ անոր համար որ *պէտք է ընէ*, այլ որովհետեւ *կը սիրէ ընել*, հանդիմանելով կ'ըզգայ անկէ:

Փարիսեցին առաջին մղոնը կը փախ, քրիստոնեան կը փախ երկրորդն ալ:

## ԿԻՐԱԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ



Աստուածաշուքին մէջ՝ շատ մը տեղեր պատուիրուած է մեզի հանգստեան օրը սուրբ պահել: Սակայն ի՞նչ կը նշանակէ սուրբ բառը, և ահա անոր նշանակութեան լոյսովն է որ կրնանք հասկնալ այդ օրուան գործածութեան կերպը:

Սուրբ բառը՝ իր բացարձակ նշանակութեամբ անշուշտ կրնայ գործածուիլ միմիայն Աստուծոյ համար: Իսկ երբ որ այս բառը գործածուի մարդոց և իրերու համար, կը նշանակէ՝ Աստուծոյ նուիրուած: Ուրեմն, Կիրակին իր հանգստեան օր նուիրուած է ան միմիայն Աստուծոյ, զԱ.յն պաշտելու և Անոր ծառայութիւն ընելու համար: Միեւնոյն իմաստով խորանն ու տաճարը՝ բոլոր իրենց սպասներովը, օծութեան իւղը, տառապանքները, երախայրիքը և բոլոր զոհերը սուրբ կոչուած էին, որովհետեւ նուիրուած էին Ամենասուրբին պաշտամունք և ծառայութիւն կատարելու համար: Ուստի, Կիրակին որպէս սուրբ օր մը, ի՞նչպէս գործածելու ենք, որ նուիրուած ըլլայ բոլորովին Աստուծոյ:

Նախ, Կիրակի օրը՝ աշխարհային հոգերը, աշխատանքն ու գործերը մէկդի ձգելու ենք: «Վեց օր պիտի աշխատիս, ու բոլոր գործերդ ընես, եօթներորդ օրը գործ պիտի չընես» էր Աստուածային պատուէրը Սինա լեռան վրայ: Թէպէտեւ ասիկա Շաբաթ օրուան համար էր որ տրուեցաւ Իսրայէլացիներուն, սակայն երկուքին մէջ ալ իմաստը միեւնոյնն է, Շաբաթը փոխարինուած ըլլալով Կիրակիով իբր հանգստեան օր: Ոմանք թէ և Կիրակի օրը չեն կատարեր ձեռագին աշխատանք, սակայն ունին մտայինը, ոմանք ալ յաջորդ օրուան գործերուն համար նա-

խապատրաստութիւն կը տեսնեն այդ օրը: Անոնք թէ և առուտուր չեն ընէր, սակայն իրենց միտքն ու խորհուրդները զբաղած են իրենց առեւտուրով, շահով, փնտրով եւլն: Եւլն: Հարկ է որ, ամէն մէկ հաւատացեալ իր նիւթական բոլոր գործերէն հրաժարի, որպէսզի կարենայ պատշաճօրէն Տէրունակոյն օրը սուրբ պահել: Ոմանք ալ Շաբաթ օրը իրենց լինցիելու կարող չեղած գործը՝ կ'ընեն Կիրակի օրը առաւօտուն կանուխ: Ոմանք թէ և չեն աշխատիր, սակայն կ'աշխատեն իրենց զաւակներն ու ծառաները, մանաւանդ այլակրօն ծառաները: Սակայն ասոնց բոլորն ալ պարտաւելի խտորումներ են՝ հանգստեան օրը սուրբ պահելու պարտականութենէն:

«Այն օրը գործ մը պիտի չգործես, ոչ դու, ոչ քու ծառադ . . . »: Կիրակի օրը մեր միտքը աշխարհային գործերով զբաղեցնելը, և ուրիշներու ձեռքով Կիրակին աւելը նոյնքան օրինազանցութիւն է մեզի համար:

Կիրակի օրը պէտք չէ աշխարհային սիրտով, հաճոյքներով և փամփոցներով անցուի: Ոմանք բոլոր Կիրակին պարտէզներու մէջ կ'անցնեն: «Եթէ Շաբաթը, իմ սուրբ օրս, . . . զանիկա պատուես՝ քու ճամբաներդ չհետեւելով, քու ցանկութիւնդ չկատարելով ու պարտալ խօսք չխօսելով» (Եսայ. 58. 13): Թերեւս չկայ ուրիշ կերպ մը՝ որով այնքան յաճախ անտեսի սուրբ օրը, քան որչափ աշխարհային և պարտալ խօսակցութեամբ: Ոմանք Կիրակի օրերը հաճոյքի վայրեր կը յաճախեն, այդ նուիրական օրը պահելու տեղ աւելի յումպէտս կը վատնեն զայն:

Ոմանք ալ Կիրակին հանգիստի օր համարելով, բոլոր օրը տան մէջ կ'անցնեն: Ոմանք թէ և պաշտամունքի ներկայ կը գտնուին, սակայն ուշ կը

մնան, որովհետեւ առտուն անկողինէն ուշ կ'ելլեն: Շարժումն մէջ ամենականուխ արթննալիք օրը Կիրակին է, ինչու որ, նախ քան պաշտամունքի ներկայ գտնուիլը, հաւատացեալը պէտք է իր անձնական աղօթքը ընէ և Աստուածաշունչը սերտէ: Ինչպէս որ քուն սիրող վաճառականը կը վնասէ, նոյնպէս ալ կը վնասէ Կիրակին քունով անցնող հաւատացեալը:

Տէրունական օրը սուրբ պահելը սոսկ աշխատութենէ հրաժարիլ չէ, ինչու որ, անգործութիւնը՝ փոխանակ սրբելու, կ'եղծանէ սուրբ օրը: Քանի որ անիկա նուիրուած է Աստուծոյ, ուստի վայել է որ այդ օրը աստուային գործերով զբաղած ըլլանք: Անոր մէջ մասը յատկացնելու ենք Աստուծոյ խօսքէն մեր հոգեւոր կեանքին անունը ստանալու համար, Աստուածաշունչը կարդալով և պաշտամունքին ներկայ գտնուելով: Աստուծոյ խօսքին մօտիկ ընելով է որ կրնանք աճիլ հոգիով: Այդ օրուան մէկ մասը պէտք է յատկացնենք աղօթքի, ինչու որ, միայն աղօթքով կրնանք յարաբերիլ Աստուծոյ հետ և ստանալ Իրմէ ոյժ և զօրութիւն: Աղօթքը թէպէտ մեր ամէնօրեայ պարաքն է, սակայն Տէրունական օրը մասնաւոր ասոր համար յատկացուած է: Ինչպէս որ Աստուծոյ տունը աղօթքի տուն է, այնպէս ալ Իր օրը աղօթքի օր է: Ուրիշ կարեւոր կէտ մըն ալ, Կիրակի օրուան որոշ մէկ մասն ալ յատկացուելու է այցելութիւններու, հիւանդները սփոփելու, վշտահարները մխիթարելու, հոգեով տկարներուն օգնելու, մեղաւորներուն փրկութիւնը աւետելու և ըն.

Ճշմարիտ է որ, այս պարտականութիւնները կրնանք և պէտք ենք կատարել նաեւ ուրիշ օրեր ալ, բայց Տէրունական օրը այս բաներուն համար յատկացուած ըլլալուն՝ անոնցմով պէտք ենք զբաղիլ: Շարժումն

օրերը մեր պարաքն է մարմնոյն վերաբերեալ գործերով զբաղիլ, նմանապէս մեր պարտականութիւնն է Տէրունական օրը անոնցմէ բոլորովին քաշուելով՝ մեր յաւիտենական շահերով զբաղիլ: Ահա այս կերպով կըրնանք սնուցանել մեր հոգին և պատրաստել այն անվախճան հանգիստին (Շաբաթին) որ կ'սպասէ Աստուծոյ ժողովուրդին:

Վեր. ԹէոՏՈՐ Ե. ՏԱՂԵԱՆ

## “ՄԵՂԱՅ, ՏԵՐ”

«Անառակ» ին պէս, գերի կիրճերու,  
Սուրբ տունեղ հեռու, բա՛ւ է, սպրեցայ.  
Հայրական սեղոյ, խաւիսի յոյսերու,  
Ո՛հ, մոռցայ շուտով, աւա՛ղ եղիւրդոյ:  
«Մեղա՛յ, ՏԵՐ»:

Ձիւ ալ կանչեցիր, քեւ անարժան,  
Քարոզիկ խօսքիդ և Աւետարան.  
Սակայն Յովնանու պէս շուտով փախայ,  
Եւ քու սուրբ գործեղ արտով հեռացայ:  
«Մեղա՛յ, ՏԵՐ»:

Քեզի, ոյ Յիսուս, քեւ ցեւր սիրով  
Աշակերտեցայ և մեծ եռանդով,  
Պետրոսի նման սակայն ուրացայ  
Ըզնեզ ակամայ ու շուտով ինկայ:  
«Մեղա՛յ, ՏԵՐ»:

Բաւ է ա՛յ սպրիս «փարախ» եղ հեռու,  
Հերիք է փարիս ունայն յոյսերու.  
Աւա՛ղ, Յուդայի պէս քեզ մասնեցի,  
Եւ մեղիւնդ քու քեզ խաչ հանեցի:  
«Մեղա՛յ, ՏԵՐ»:

Ակնարկդ դարձուր ինծի ալ շուտով  
Որ Պետրոսի պէս զոքամ, ո՛հ, լալով,  
Սողոմոն հոգիս Պողոսի փոխէ,  
Մեղիքի կտրանքի քիս շուտ արձակի:  
«Մեղա՛յ, ՏԵՐ»:

Շընորհե ինծի Հոգիդ երկնային,  
Որով առըցուած սիրով արագին  
«Կրեմ իմ խաչըս», քեզի ծառայեմ,  
«Եւ այգիդ մէջ հաւատքով գործեմ»:  
Ա. Կ. Թ.

## ԱՌԱՆՑ ՔՐԻՍՏՈՍԻ ԿԵԱՆՔԵՐ



Ներկայ դարը լի է կեանքերով, որոնք սակայն չեն ճանչնար Յիսուս Քրիստոսը որպէս իրենց անձնական և աշխարհի Փրկիչը, թէպէտ Յիսուս երկինքէն եկաւ բոլոր մարդկութեան Փրկիչը ըլլալու: Կեղծ կեանքը Սատանայի ձեռքերուն մէջ գործիք մը դարձած է որով մարդոց միտքերը կը կուրցնէ որպէսզի ճշմարտութիւնը չի հասկնան, ասոր համար Ան ունի ամէն երկրի մէջ իր ներկայացուցիչները, որոնք կ'աշխատին կրօնքի քողին տակ: Աստուած ի յաւիտեանից իր մտքին մէջ յղացաւ որ իր միածին Որդին զրկէ աշխարհ որպէս փրկանք մարդոց մեղքերուն և միակ միջնորդը Աստուծոյ և մարդուն միջև: Նիկիոյի մոտ Յիսուսի եկաւ գիշեր ատեն և ըսաւ Անոր. «Գիտեմ որ Դուն Աստուծ մէ վարդապետ եկած ես» իսկ Յիսուս պատասխանեց անոր և ըսաւ «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի, պէտք է ձեզի նորէն ծնանիլ»:

Սիրելի ընթերցող, արգեօք դուն վերստին ծնա՞ծ ես. եթէ կ'ուզես Աստուծոյ թագաւորութիւնը տեսնել և մտնել, պէտք է իբր մեղաւոր խոնարհիս Անոր առջև որպէսզի նա քեզ լուա իր արիւնովը: Անոր արիւնը որ թափուեցաւ Գողգոթայի խաչին վրայ միակ դեղն է մեր հոգիներուն: Նիկիոյի մոտ Իսարայէլի մէջ կրօնքի վարդապետ մըն էր, սակայն պէտք ունէր վերստին ծնունդի: Եսայի մարգարէ մըն էր, սակայն երբ Աստուծոյ մօտեցաւ տեսաւ որ ինքը մեծ մեղաւոր մըն է և սկսաւ աղաղակել «վայ ինծի, ահա կը կորսուիմ»:

Յոբ արդար մարդ մըն էր և իրեն նմանը չկար, սակայն երբ Աստուծոյ ներկայութիւնը տեսաւ, ա-

ղաղակեց «ես խղճալի մարդ մըն եմ, ահա կը խոստովանիմ հոգի և մոխրի վրայ»:

Հետեւաբար, դուն, իբր անուանական քրիստոնեայ, Աստուծոյ առջև թշուառ մեղաւոր մըն ես, կորսուած բացարձակապէս, սակայն փառք ըլլայ որ Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ. մեղաւորները փրկելու համար իր արեան գինովը:

Սիրելի բարեկամս, ընտրէ այսօր կենաց ճամբան, քանի տակաւին ուշ չէ, կու գայ օր մը երբ ալ քեզի օգնող մը չըլլար, Յիսուս այսօր Փրկիչ է մեղաւորներուն, վաղը քու դատաւորդ կ'ընայ ըլլալ, և ինչո՞ւ իրմէն և իր փառքէն զրկուիս ու բաժինդ ըլլայ յաւիտեանական դատապարտութիւն:

Պատասխուէ՛ ԲՈՒ Աստուծոյ առջեւ ելլելու երբ Ան գոյ իրենները առնելու, դուն պատրաստ ես Զինքը դիմաւորելու: Յիսուս ըսաւ. «Ես կ'երթամ ու նորէն կու գամ և ձեզ քովս կ'առնեմ» (Յովհ. 14. 3): Սիրելի ընթերցող, մենք կ'ապրինք այսօր աշխարհի ամենավերջին չրջանին մէջ, ազգային, քաղաքական և տնտեսական ու բարոյական ազդակները ճնշակացած են: Դիւանագէտները չեն կարող պատերազմին առջեւ տունել որ բովանդակ աշխարհը սարսափի մատնած է: Ասոնց ամէնը զօրաւոր նշաններ են որ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի գալուստը մօտ է: Ուստի աճապարէ Անոր գալու, և ընդունէ հրաւերը և յանձնէ քու հոգիդ հուսադրիմ Ստեղծողին (Ա. Պետ. 4. 19):

«Ահա հիմա է ընդունելի ժամանակը, ահա հիմա է փրկութեան օրը» (Բ. Կոր. 6. 1-2):

Գերմաներէնէ քարգլ.

Կ. Յ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

## ՊՕՂԻԿԱՐՊՈՍ

(Շարունակութիւնն նախորդ թիւէն)

Պօղիկարպոսի օրերը վէճ մը ծագեցաւ Զատիկը ո՞ր օրը պահելու նկատմամբ։ Ոմանք՝ կը նախընտրէին Կիրակի օրը պահել զայն, իսկ ոմանք կողմնակից էին հրէական Պասեքին հետ առնչաբար տօնել<sup>(\*)</sup>։ Երկուստեք կը պնդէին առաքելական իշխանութիւն ունենալ։ Արեւմտեան եկեղեցիներ անպատեհ կը նկատէին այսպիսի կարեւոր օրուան տօնուիլը Կիրակիէն զատ ուրիշ օր մը։ Պօղիկարպոս արեւելեան եկեղեցիներու իբր ներկայացուցիչը՝ կը չնշտէր միւս տեսակէտը, յարելով՝ թէ այնպէս սորված է առաքեալներէն։ Պօղիկարպոս սոյն խընդրոյն վրայ Հռոմի եպիսկոպոսին հետ տեսակցութիւն մը ունենալու համար յանձն առաւ երկար ճամբորդութիւն մը դէպի Հռոմ։ Այն ատեն Հռոմի եպիսկոպոսն էր Անիկետոս։ Նա սիրալիր ընդունելութիւն մը ըրաւ Պօղիկարպոսին և անոնք խորհրդակցական բազում ժողովներ ունեցան սոյն վիճելի կէտին վրայ։ Կարելի չեղաւ համաձայնութեան եզր մը գտնել, որովհետեւ իւրաքանչիւրը իր տեսակէտին վրայ անխախտ կը մնար։ Սակայն համաձայն գտնուեցան մէկ կէտի վրայ, և ան ալ սա՛ էր՝ թէ քրիստոնէութեան էութիւնը չէր կայանար այս տեսակ բաներու մէջ, այլ արտին նշանակումն մէջ Տէրովը՝ որ անխտիր ամենունն էր, և եղբայրներու հանդէպ ճշմարիտ սիրոյն մէջ։ Իբր հաւատարմ այս համաձայնութեան Տէրունական ընթրիքը կատարեցին միասնաբար։

(\*) Հրէական տարուան առաջին ամսուն ամերջոսին, որ կը հանդիպէր Կիրակիէն տարբերութեամբ։

Եւ Անիկետոս իբր փաստ իր համամտութեան, և յետոյ պատիւ ընելու համար Պօղիկարպոսին, ստիպեց զինքը որ Հաղորդութեան սեղանին մատակարարութիւնը ինքը կատարէ։

Այս բարի մարդիկ զժողովութիւն չքաշեցին միասնաբար Տէրը պաշտելու մէջ, թէպէտ իւրաքանչիւրը շարունակեց մնալ հաստատ իր համոզման մէջ՝ իրարու միջև վիճելի կէտերու շուրջ։ Եկեղեցական պատմութիւնը չափէն աւելի լեցուն է եղբայրական սիրոյ այսպիսի արտայայտութեանց արձանագրութիւններով, այնպիսի մարդոց միջև, որոնք հակառակ տեսակէտներ կը պաշտպանէին։

Պօղիկարպոս իր Հռոմ բնակութեան շրջանին՝ լծուեցաւ համոզելու զանոնք որոնք մոլոր վարդապետներու երեսէն եկեղեցիէն ուժացած էին։ Ան կը վկայէր այն վարդապետութեանց ճշմարտութեան ինչպէս ինքը սորված էր առաքեալներէն։ Շատերուն վրայ ազդեց և վերադարձուց զանոնք փարիսէական Քրիստոսի, և այն հաւատքին՝ որ անգամ մը ունանդուեցաւ սուրբերուն։

Սոյն մոլոր վարդապետներուն մէջ ամենէն վտանգաւորը Մարկիոն կոչուածն էր։ Այս մարդը օր մը Պօղիկարպոսին կը հանդիպի փողոցը, և իրմէ բարեւ չստանալուն, զոր կ'ակնկալէր, կ'աղաղակէ, «Պօղիկարպոս, նկատի ուռէք մեզ», որուն Պօղիկարպոս անմիջապէս կը պատասխանէ. «Արդարեւ, կը նկատեմ քեզ որպէս Սատանային առջիւնեկը»։

Ասիկա արձանագրութեամբ է Երանոսի կողմէ, որ ճանչցաւ Պօղիկարպոսը իր վերջին օրերուն։ Կը խօսէր իր մասին մեծագոյն հիացումով մը, իր ջերմեռանդ նախանձախնդրութեան վրայ՝ ճշմարտութեան համար։

Երանոս նաև կը պատմէ զրուակ

մը զոր Պողիկարպոս սովոր էր պատմել Յովհաննէս առաքելոյն վրայ: Առաքեալը օր մը բաղնիք կ'երթայ, եփեսոս: Երբ ներս կը մտնէ կը տեսնէ հոն կիրենտոսը, մէկը՝ ուրիշ գլխաւոր մօլոր վարդապետներէն: Տեսնելով զինքը հոն փութով դուրս կ'ելլէ բաղնիքէն ազազակելով՝ «Շուտ դուրս ելլենք ասկէ, չըլլայ որ բաղնիքը մեր վրան փլի»:

Պողիկարպոս Փիլիպեցիներուն ուղղած թուղթ մը ունի զոր զանց կ'ընենք հոս, որուն մէջ, սակայն, Սբ. Գրային զօրաւոր չունի մը կը տիրէ: Ան սոյն թուղթին մէջ կը դատապարտէ հերետիկոսութիւնները ճիշդ առաքեալներու ոճով, և այն խանդավառ ձևը՝ որով կը յորդորէր Փիլիպպեցիները խորհրդածելու և գուրգուրուլու Պողոս առաքելոյն իրենց ուղղած թուղթին վրայ, կը ցուցնէ՝ թէ ինչպէս կը սիրէր առաքեալներուն ներշնչեալ ուսուցումները:

«Ես կը յիշեմ, կ'ըսէ Երանոս, ճիշդ այն վայրը ո՛ւր ան (Պողիկարպոս) սովոր էր քարոզել, իր ելլելն ու մտնելը և իր կեանքին բոլոր մասնաւորութիւնները: Կրնամ մտաբերել իր կերպարանքը, իր քարոզները: Եւ ինչպէ՞ս ան կը պատմէր իր խօսակցութիւնները Սբ. Յովհաննէս, և ուրիշ առաքեալներու հետ որոնք տեսած էին Տէրը, և ինչպէ՞ս ան կը պատմէր իրենց խօսքերը, և անոնցմէ Տէրոջը վրայ լսածները իր հրաշքներուն և վարդապետութեան վրայ: Պողիկարպոս իբրեւ մէկը որ ընդունած էր անոնցմէ որոնք ականատես եղած էին Կենաց Բանին, կը պատմէր ճիշդ ու ճիշդ Սբ. Գրոց համապատասխան կերպով: Այս բոլորին, Աստուծոյ շնորհքովը ես կ'ունկնդրէի ամենայն նախանձախնդրութեամբ, կը նօթագրէի զանոնք, ոչ թէ թուղթի


վրայ, այլ սրտիս, և տակաւին շնորհքովն Աստուծոյ կը պահեմ զանոնք մտքիս մէջ ճշգրտօրէն: Տէրոջը առջև կը վկայեմ թէ, եթէ ան օրհնեալ և առաքելատիպ եպիսկոպոսը լսէր մօլոր վարդապետութիւն մը, ականջները գոցելով կ'ազազակէր. «Ով փառաւորեալ Տէր ի՛նչ օրերու պահեցիր զիս, որ այս բաներուն համբերեմ, և կը փախէր այն տեղէն ուր նստած կամ կայնած էր: Ասիկա նաև յայտնի է իր թուղթերէն զորս նա զրկեց շրջակայ եկեղեցիներուն զանոնք քաջալերելու համար, և անոնցմէ զորս զրկած էր եղբայրներէն ոմանց՝ յորդորելու և դարձի բերելու համար զանոնք»:

Մենք դիւրաւ կ'ըմբռնենք այն մեծ արդիւնքը յայտնուած այդ ծալ-րայեղ սիրոյն՝ եկեղեցւոյն և ճշմարտութեան համար, և ատելութիւնը՝ մոլորութեանց դէմ: Նախանձաւոր աչքով կը հսկէին նոր ծագում առնող վարդապետութեանց վրայ որպէսզի անոնք չներմուծուին եկեղեցին: Անոնք իրենց բոլոր գրութիւններուն մէջ մատնանիշ կ'ընէին Սբ. Գրիքը և առաքեալներուն օրինակը որպէս միակ սկզբնականութեան, և այսպէս դրին, Աստուծոյ բարինախախտութեամբը, զէնքերու մեծ մթերք, յարմարեցուած գործածութեան համար մոլորութեանց դէմ՝ ամէն դարու մէջ:

Սակայն այժմ կամքն էր Անոր՝ որուն Պողիկարպոս կը ծառայէր իր բոլոր սրտովը, որպէս Զմիւռնիոյ եպիսկոպոսը, և որ այնքան երկար տանն առաջնորդած էր իր հօտը թէ՛ զգուշացնելով և թէ՛ սորվեցնելով, օրինակը տար աւելի փառայեղ վկայութեան՝ ճշմարտութեան համար: «Մինչև ի մահ» հաւատարմութիւնը այժմ պիտի փորձուէր, և կենաց պատկը, զոր առաքեալը խոստացած էր

Փրկչին անուշով, իր վարձքը պիտի ըլլար: Բարեբախտութար մենք ունինք այս սուրբին մարտիրոսացման մասնորաման և վստահելի պատմութիւնը զոր պիտի սկսինք տալ յաջորդ թիւերու մէջ:

(Շարունակելի)



## ԱՌԱՆՑ ԹՆԴԱՆՕԹՆԵՐՈՒ ՅԱՂԹՈՒԹԻՒՆ

Սապէս կը պատմէ գերմանացի սպայ մը. — 1870 թուականին մեր հեծեալ զօրագունքը հրաման ստացաւ Սթրազպուրկէն Պէլֆօրդ մեկնել: Անորաբի կը յառաջանայինք հիմնալի ճամբաներէ: Առաջին գիւղը հասնելով կանգ առինք հանգստանալու: Կարծես ամէնը մեռած ըլլային. հարկաւոր էր զգուշութիւն: Սուրհանդակներ զրկեցինք գիւղ. ան պարպուած էր, բնակիչները բոլորն ալ փախած էին մօտակայ լեռները: Վերջապէս հասանք աւետարտնչի մը տունը: Բարոզիչը միտակ մնացած էր ամբողջ գիւղի մէջ: Գոյնը նետած, վախով մեզի կը նայէր:

— Ո՞ւր են ձեր ծխականները, հարցունքինք:

— Ամէնն ալ փախած են լեռները, պատասխանեց ան:

Խնդրեցինք որ մեզի հետ գնդապետին քովը գայ: Գնդապետին տալով մեր տեղեկութիւնը, քարոզիչը ներկայացուցինք իրեն:

— Ո՞ւր են ձեր մարդիկը, հարցունք գնդապետը:

— Լեռները փախած են, պատասխանեց ան:

— Ինչո՞ւ փախած են, մենք քաղաքացիներու հետ չենք կռուիր:

— Մարդիկը չեն հաւատար պա-

տասխանեց քարոզիչը: Անոնք ուրիշ տեղերէն լսած են որ Փրուսիացի հեծեալները հին ատենուան հօներու նման ամէն բան կը փճացնեն և աւերակ կը դարձնեն:

— Գացէ՛ք ըսէք ձեր մարդոց որ ստիկա սուտ է, հրամայեց գնդապետը, մենք ոչ ոքի վնաս չենք տար, եթէ մեզի դէմ զէնք չզործածեն: Ես ստիկա կ'երաշխաւորեմ իմ ազնիւ խօսքովս:

— Ձեռն հաւատար, պարոն գնդապետ, պատասխանեց քարոզիչը, և ո՛չ մէկը կը վերադառնայ:

— Գացէ՛ք փորձեցէ՛ք, հրամայեց գնդապետը:

— Կը կատարեմ ձեր հրամանը, բայց նախապէս ըսեմ ձեզի որ անոգուտ է: Լիյապէս ալ եղաւ: Անհամբեր իր վերադարձին կ'սպասէինք: Գլուխը կախած եկաւ ու պատմեց, որ ոչ մէկը կ'ուզէ վերադառնալ: Գնդապետը լուռ կը մտածէր թէ ի՞նչ ընէ:

Բարոզիչը աչքերը արցունքով լեցուած վեր նայելով ըսաւ. — «Պարոն գնդապետ, կարելի միայն մէկ ելք կայ»:

— «Եւ ո՞րն է անիկա հարցունք անմիջապէս սպան»:

— «Պր. գնդապետ թողէ՛ք որ յառաջ գան ձեր փողահարները, ամուր հնչեցնեն փողերուն ձայնը և ձեր հեծեալներն ալ երգեն անոնց հետ միասին ծանօթ երգը. —

«Ասուած մեր բերդն է հաստատուն  
Եւ հզօր պաշտպան մը,  
Երբ միշտ պահէ, և փորձութիւն,  
Ինքնէ՛ք քաջ օգնական մը»:

Գնդապետը ժպտեցաւ և շուտով հրաման տուաւ: Եւ լեռները սկսան արձագանք տալ — ժայռ մը միւսին կը հասցնէր ձայնը — փողերը կը հնչէին մարդիկը կ'երգէին:—

«Աստուած մեր բերդն է հաստատուն»:

Շատ չէր անցած ահա դէմք մը այստեղէն ժայռի մէկ խողովէն մտիկ կ'ընէր և միւսը՝ այնտեղէն, վերջապէս մէկը այստեղէն, միւսը՝ այնտեղէն մօտեցաւ: Եւ փողերը կը փչէին և հեծեալները կ'երգէին, «Աստուած մեր բերդն է հաստատուն»: Քիչ մը եւս, և ահա՝ գիւղին ընտկիչներուն ամէնը ժողովուած և ձեռքերն ին միացուցած զօրքերուն քով կանգնած էին: Եւ երբ որ երգեցողութիւնը վերջացաւ, գնտապետը սկսաւ քարոզչին հետ խօսիլ քաղցրութեամբ, կանչել տուաւ գիւղապետը և խօսեցաւ անոր հետ և այսպէս սիրով և խաղաղութիւնով գիւղացիները և հեծեալզօրքը միասին մտան գիւղը:

Առանց թնդանթններու յաղթութիւն:

## ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՒԱՏՔ

Հօրանտայի քաղաքներէն մէկուն մէջ կ'ապրէր աղքատ որբեւայրի կին մը՝ որ շատ անգամ դառն նեղութեան մէջ կը գտնուէր:

Իրիկուն մը իր զուակները իրմէ հաց ուզեցին, բայց տունը հաց չկար, նա փոքրիկներուն հետ միասին ծունկի գալով եռանդով աղօթեց Աստուծոյ, ըսելով. «Դուն որ անգամ մը ազաւանները զրկեցիր մարգարէն կիրակելու, իմ զաւակներուս համար ալ հաց զրկէ»:

Երբ անոնք ոտքի ելան, ութը տարեկան աղան գնաց դռները բացաւ և բաց ձգեց զանոնք:

— Ի՞նչ կ'ընես աղաս, հարցուց մայրը զարմացած:

— Որպէսզի ազաւանները ներս մտնեն՝ դռները պէտք է բաց ըլլան մայրիկ, ըսաւ աղան պարզամտօրէն:

— Ո՛հ, դուն միամիտ աղայ, շատոնց ի վեր այդ պատմութիւնը կատարուած է, ըսաւ մայրը:

— Մայրիկ, ինչ որ սիրելի Աստուածը անգամ մը ըրած է երբեք չմոռնար կրնայ դարձեալ ընել, մենք դռները բաց ձգենք և տեսնենք թէ արդեօք սիրելի Աստուածը ի զո՞ւր տեղը այս պատմութիւնը մեզի վերջիչել կու տայ:

Ճիշդ այդ տեսնները քաղաքապետը այնտեղէն կ'անցնէր, տեսաւ բաց դռները, կանգ առաւ և ներս նայեցաւ, յետոյ մօտենալով հարցուց թէ ինչո՞ւ դռները բաց են այսպէս ուշ տեսն:

Որբեւայրին ժպտադէմ և արտասուալից աչքերով պատասխանեց թէ ինքը աղօթած էր հացի համար և թէ յիշել տուած էր Աստուծոյ՝ Եղիան ազաւաններով կերակրելը, և փոքրիկին դռները բաց ձգեց որ ազաւանները ներս մտնեն:

— Ուրեմն անիկա իրապէս խորունկած պիտի չըլլայ, ըսաւ բարի մարդը, դռները բաց թողուցէք մինչև որ ազաւանները գան:

Քաղաքապետը հեռացաւ, բայց չուտով եկաւ անոր սպասուորը՝ կողով մը լեցուն հաց, միս և սննդեղէնով: Խեղճերը ուրախացան, որովհետեւ ստիկա շատ օրերու համար օգնութիւն մըն էր: Երբ սպասուորը դուռը գոցելով հեռացաւ, փոքրիկ աղան կրկին բացաւ զայն և երկինք նայելով ըսաւ. «Սիրելի Աստուած, Դուն վարձատրէ մեզի օգնողին, յետոյ դուռը գոցեց և կղպեց. ան գիտէր որ օգնութիւնը Տէրոջմէն եկաւ, թէպէտ ազաւան չէր բերողը:

Արդ, մենք թերահաւատներս պէտք է սորվինք՝ որ ինչ որ Աստուած ըրաւ կրկին ընելու կարող է, միայն սորվինք մանկական հաւատքով Անոր ապաւինիլ:



## ՄԵՐ ՀԱՅ ԵՐԿՍԵՆԻ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ



### ԵՐԲ ԵՍ ՄԵԾՆԱՄ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ Կ'ԸԼԼԱՄ

Մարիամը սիրուն փոքրիկ աղջիկ մըն էր։ Իր խաղընկերներէն ոչ մէկը իրեն պէս զուարթ չէր կամ քաղցր ծիծաղ մը չուէր։ Անոր համար ալ ամէնքէն սիրուած էր։ Իր մայրը որքեւայրի էր, և ճշմարիտ քրիստոնեայ մը։ Անոր ջերմ փափաքն ու աղօթքն էր որ իր փոքրիկ Մարիամը իր կոնուխ հասակէն Տէրը ճանչնայ։ Սակայն մօրը լուրջ խօսքերը չէին ազդեր իր սրտին վրայ։ Ան միշտ կ'ըսէր. «Ո՛հ մայրիկ ես դեռ փոքր եմ, անգամ մը որ մեծ ըլլամ, ես ալ քրիստոնեայ կը դառնամ, հիմա դեռ կոնուխ է» և այսպէս ըսելով սենեակէն դուրս կը վազէր թողելով իր մայրը վշտացած սրտով։ Մայրն ալ ուրիշ բան չէր կրնար ընել, այլ միայն յանձնել իր սիրելի զաւակը Անոր որ ունի բաւական միջոց այս անսանձ հոգին խոնարհեցնելու։

Ամիսներ կ'անցնէին և Մարիամը կ'ըլլար տասներկու տարեկան, և դեռ մայրական աղօթքներ կը մնային անպատասխան։ Այն ժամանակ պատահեցաւ զէպօ մը որ անմիջապէս մեծ փոփոխութիւն յառաջ բերաւ։ Ամառ էր, և եղանակը շատ սիրուն։ Մարիամ իր մօրմէն հրաման առաւ իր ընկերուհիներէն մէկուն հետ մօտակայ անտառները երթալ զբօսնելու։ Փոքրիկներ իրենց ճաշը միասին տարին, և օրը անցուցին ծիծաղով և կատակ-

ներով։ Շատ լաւ էր ստուերախիտ ծառերու տակ, մամուռով ծածկուած գետինը հրապուրելէ էր, և փետրազարդ երգիչները այնքան փառաւոր կ'երգէին որ, աղջիկներ չէին ուզեր բաժնուիլ անոնցմէ։ Իրիկունը շատ շուտ վրայ հասաւ։ Երբ վերջապէս յիշեցին թէ այլեւս տուն դառնալ պէտք է, յանկարծ փոթորիկը վրանին կը հասնէր, այնքան զբաղած էին ծաղիկներ ժողվելով և պսակներ հիւսելով, և ամենեւին չէին նկատած թէ ինչպէս երկինքը կամայ կամաց ծածկուեր էր սեւ-սեւ ամպերով։ Սարսուփով տեսան թէ անկարելի է տուն հասնիլ կամ ամենամօտ խրճիթը, փոթորիկն սկսելէն առաջ։ Անոնք ահապարեցին անտառէն դուրս ելլել և հասնիլ դիւղի ճամբան։ Անձրեւը ըսկսաւ խոշոր կաթիլներով թափուիլ, և երկինքը կ'որոտար, և յաճախակի կրկնուող կայծակը ահով և սարսուփով կը լեցնէր փոքրիկներուն սրտերը։ Մարիամ իր ընկերուհիին առաջարկեց ճամբու մօտ հաստ ծառի մը տակ ապաստանիլ, որուն տերեւախիտ ճիւղերը կրնար պաշտպանել զիրենք հեղեղանման թափուող անձրեւէն։ Իր ընկերուհին եսթեր կ'ուզէր տարհամոզել զինքը, բայց Մարիամ առանց ուշ դնելու եսթերին խօսքերուն վազեց գնաց և ծառին դուրս ցցուած արմատին վրայ նստաւ։ Ես-

Թե՛ր ի՛ր ետեւէն կ'անշելով կ'ըսէր թէ պէտք չէ ծառին տակ նստի, որովհե- տեւ դեռ քանի մը օր առաջ ի՛ր հայ- րը ըսած էր որ շատ վտանգաւոր է փոթորկի տանն ծառին տակ պաշտ- պանուիլ: Քանի որ Մարիամ հոգ չէր ընէր, աճապարեց իր մօտ և քաշելով դուրս հանեց զինքը ծառին տակէն: Հազիւ թէ անոնք մի քիչ հեռացած էին, աչք կուրցնող կայծակ մը որուն անմիջապէս հետեւեցաւ սուրստիկի որոտման զղրղիւն, ահուգողի մատնեց զիրենք: Դառնալով տեսան որ այն ծառը որուն տակ քիչ առաջ կանգ ա- ուած էին, տատանելով սաստիկ շառու- չիւնով մը գետինը տապալեցաւ: Կայ- ծակը զայն երկուքի բաժնում էր: Եթէ երկու վայրկեան եւս մնացած ըլլա- յին հոն անշուշտ իրենք ալ սո՛խացած պիտի ըլլային: Թէպէտ գողահար և գունաթափ, իրենց ըստ ուժովը վա- ղեցին դէպի տուն, կը վախնային թէ իրենք ալ կայծակնահար ըլլան: Շըն- չոսպառ և թրջուած տուն հասան:

Այս դէպքը երկուքին վրայ ալ այնպիսի ազդեցութիւն մը թողուց որ այլեւս չէին կրնար մոռնալ: Մա- րիամ թրջուելէն սաստիկ մտած էր, և պէտք եղաւ որ շատ օրեր անկողին մնայ: Իրիկուն մը իր քովը նստած մօրը ըսաւ. «Ո՛հ, մայրիկ, ի՞նչ պիտի ըլլայի եթէ այդ ծառին տակ մնայի- եթէ մեռնէի ատիկա պիտի ըլլար իմ արժանաւոր հատուցումս, որովհետեւ ես միշտ կ'ըսէի թէ երբ մեծնամ քե- ռիստոնեայ կ'ըլլամ»:

— Ես կը կարծեմ որ տաիկա քե- ղի լաւ դաս մը եղաւ, այժմ կը փա- փաքի՞ս քրիստոնեայ ըլլալ, աղջիկս հարցուց մայրը:

— Այո՛, մայրիկ եթէ Տէր Յի- սուս ընդունի զիս, այսքան սպասելէն ետքը:

— Ի հարկէ աղջիկս, Ան ըսաւ

որ, «ան որ ինծի կու գայ բնաւ դուրս պիտի չհանեմ»:

— Բայց ի՞նչպէս պիտի գամ, ես կ'ուզեմ գալ:

— Հուատա՛ Տէր Յիսուս Քրիս- տոսի, և դուն պիտի փրկուիս:

— Բայց ես հաւատացած եմ Ա- նոր, ըսաւ Մարիամ:

— Զաւակս դուն Անոր հաւատա- ցեր ես, իրաւ է, բայց անիկա սրտովդ չէ, այլ քու ճիշակացողութեամբդ: Դուն կը հաւատա՞ս թէ Ան մեռաւ քեզ փրկելու:

Փոքրիկ հիւանդը մի քանի րոպէ մտածելէն ետքը վերջապէս ուրախ ձայնով մը գոչեց.

— Ո՛հ մայրիկ, այժմ կը հասկնամ, Յիսուս զիս փրկած է, Ան ինծի հա- մար մեռաւ, մինչև իսկ ինծի պէս չա- րին համար, որովհետեւ Անոր սիրտը լեցուն է սիրով մեզի հանդէպ:

Սիրելի ընթերցող, դուն ալ ըն- գունա՞ծ ես Յիսուսը իբրեւ քու Փր- կիչդ: Կրնա՞ս ըսել դուն ալ. «Յիսուս զիս փրկած է, Ան ինծի համար մե- ռաւ»:

ՄԱՐԻ



## ՔԱՐՈՋԻՉՆ ՈՒ ՔԱՐԿՈՓԸ

Անգամ մը քարոզիչ մը տեսաւ՝ որ աղէտ մարդ մը ծուկներուն վրայ եկած քար կը կոտրէ: «Ա՛հ, Յովհաննէս, ը- սաւ ան, ես կը փափաքեի կոտրել իմ ունկնդիրներու սրտերը, ինչպէս դուն կը կոտրես այդ քարերը բոլ մուրճովդ»: Բանուոր Յովհաննէսը պատասխանելով ըսաւ. «Կարելի է ասիկա ընել չե՛ք փո- ձած ձեր ծուկներուն վրայ»:

## ՀԱՐՑՈՒՄ ԵՒ ՊԱՏԱՍԻԱՆ

**Հարց.**— Հանեցիք բացատրել Հո. 9. 14-18ը: Ասիկա կը նշանակե՞րք թէ Աստուած կը խստացնէ սիրտըր անոնց՝ որոնց վրայ կ'ուզէ յայտնել Իր փառքը, ինչպէս եւ Փարառնիկն պարագան: Կամ Յուդայի պարագային, որպէսզի Գիրքերը կասարուին: Բրիստոսի համար մասնիշարժիչ ընկելու սահմանաւած եր ան:

**Պատ.**— Աստուած ունի կանխագիտութիւն, եւ առաջոց կարող եւ զիտնայ՝ թէ մարդիկ ի՞նչ պիտի ընեն: Աստուած խստացուց Փարառնիկն սիրտը երբ Փարառն ինքը կարծուցուց իր սիրտը: Այն բաները՝ որոնք Փարառնիկն սիրտը խրատացուցին, Իսրայէլի ժողովուրդին եւ Հաս մը Եգիպտացիներուն արեւն ալ կակուղացուցին: Աստուած երբեմն Իր մեծ ողորմութեան մէջ կ'ընէ այնպիսի բաներ՝ որոնք յաճախ մարդոց սիրտըր կը խստացնեն, անոր համար որ անոնց սրտերը Աստուծոյ հանդէպ ուղիղ դիրքի մէջ չեն: Փարառն պիտի չէր որ ապրտտանքի դիրք բռնէր Աստուծոյ դիմ, իր այս արարքը յանդուգն բան մըն եր. եւ հակառակ Աստուծոյ հրահաններուն:

Յուդա ստիպուած չէր Յիսուսը մատնելու, ասիկա ըրաւ իր ազատ կամքով: Աստուած նախաահանում չէր Յուդան ի մատնաորի, ասկայն Սէ զիտեր թէ այդպէս պիտի ընէր: Եւ Աստուած երբեմն այդպիսիներուն այս դիրքը օգտագործելով Իր փառքը կը յայտնէր եւ կը քոյրատէր որ Գիրքերը կասարուին:

**Հարց.**— Ա. Թագ. 28րդ գլուխին մէջ կը տեսնեն որ Ենդորի վիտկը Սաւուդին համար Սաւուդը վեր հանեց գերեզմանէն, անիկա իրապէս Սաւուդէ՞ր եր թէ Սասանան անոր կերպարանքը աւած եր:

**Պատ.**— Այս պատմութեան մէջ

դժուարահասկնալի բաներ կան, ասկայն ոչ մէկ բան կայ ցոյց տուող՝ թէ վիտկը կարողացաւ վեր հանել մեռածը, կամ Սասանան կրցաւ ետ կանչել զայն: Կան ոգեհարցութեան «մեթիքներ» որոնք կրնան անձնաւորել մեռած անձերը, ասկայն զանոնք ետ չեն կրնար կանչել: Սասանան եւ իր գործակալները այսչափ բան մը կրնան ընել, բայց կարող չեն մեռելը անձաւք վեր հանել: Եթէ երբեք մեռելները կու գան, Աստուած կը դրկեզանոնք: Ասիկա, անտարակոյտ, ճշմարիտ եւ Սաւուդէի պարագային: Տերը մատնաւոր նպատակի համար քոյր տուա՝ որ Սաւուդը վերեւեւնայ պահ մը: Մովսէս եւ Եղիա այդպիսիպումի յերան վրայ երեւցան:

Սաւուդէի պարագային՝ ասիկա քոյրուովին անակնկալ բան մըն եր Ենդորի ոգեհարց կնկան համար, որովհետեւ ինքն ալ մեծապէս զարնացաւ տեսնելով Սաւուդը եւ ուրիշ աստուածները որոնք գետնէն կ'ելլէին Սաւուդին ընկերակցութեամբ: Միեւեւ իսկ վախէն բարձրադադակ պտագ:

Աստուծոյ դժգոհութիւնը կը հրաւիրեն անոնք որոնք ոգեհարցները կը դիմեն իրենց մեռելներուն համար: Խախտարգիշուած եւ նաեւ անէն տեսակ քաղղագուշակութիւններ, հմայութիւններ, արձահմայութիւնն ալ մեքը ըլլալով:

Ա.

— Գեւ ունակութիւններ սարդի բելերով կ'սկսին, շղթայով կը վերջանան:

\* \* \*

— Աստուծոյ հետ բաղդ մարդը միտ կը հասնի իր նպատակակէտին:

\* \* \*

— Գովեսը իմաստունը կ'ընէ խոնարհ, յիմարը հպարտ:

## ԱՆՆԱՅԸՆ ՄԵՎՅԻՊԵԼԵՐԻ ՎԵ ՄԵՎՅԻՊԵՍԻ

Հէր էյի շէյ Ալլահըն պիր մէվհի-  
պէսի տիր, վէ Ալլահըն հէփ մէվհի-  
պէլէրի էյի տիր: Պիր փէտէր քէնտի  
էվլատընըն խայրը իշիւն լազըմ օլտն  
թէրթիպ վէ փլանլարը ետփաղը կի-  
պի, Ալլահ տափի պու տիւնեայը վէ  
հայաթը տաէմին մէսուտիյէթի վէ  
րէֆտհը հալը իշիւն թէրթիպ էթտի  
Յագաթ միւսրիֆ օղուլ հէփ էյի շէյ-  
լէրինի քէնտի զիյանընա սարֆ էթ-  
տիյի կիպի, տաէմ տախի Ալլահըն  
քէնտինէ վէրտիյի հէր էյի շէյլէրի  
սուր իսթիմալ էտէրէք քէնտի քէն-  
տինին խարապընա սէպէպ օլտու:

Թապիսթտա կէօրիւլէն Ալլահըն  
մէվհիպէլէրի պի հիսապ տըր: Անլէր-  
տէն պա՛տըլարը՝ տաէմլէրին իսթի-  
թիմալը իշին, պա՛տըլարը տա տիւն-  
ետյա հիւան վէրմէք իշիւն տիր, ֆու-  
գաթ ճիւմլէսիտէ տաէմին խայրը ի-  
շին ետփըլմըն տըր: Պու էյի զէմին,  
կիւնէշ, այ, էճատմը սէմալիյէ, կէճէ,  
կիւնտիւզ, տէօրթ մէվսիմլէր, տաղ-  
լար, օվալար, տէրէլէր վէ թէփէլէր,  
ըրմաղլար, չայար, հիսապսըզ գուշ-  
լար վէ պալըզլար: Կէօրիւնմէյէն է-  
լէրթրիք գուվլէթլէլի, կազ, բատիօ  
ֆա՛տլիյէթի: Զէմինին պաթնընտա  
պուլտնա խաղէնէլէր.— զիգըյմէթ  
թաշլար, ալթուռ, կիւմիւշ, պազըր վէ  
տիկէր ֆաիտէլի մա՛տէնլէր: Մուզիգ  
քիթապլար, սէնայիի պէտիէ: Տօթ-  
լար, սէվկիւլիւլէր, ֆումիւհա հայա-  
թը, չօճուզլար վէ զայրի, չիւնքի Ա-  
նըն պիզէ օլտն աթիյէլէրինի թա՛տաւ  
էթմէք իշիւն պիզէ վազըթ եէթիշ-  
մէզ: Իմտի կէօրիլիյօր քի Անըն հէկ-  
ետնէ արզուսու տաէմի՞մսրուր կէօր-  
մէք տիր, ֆագաթ պազընըզ տաէմ  
պու ա՛թիյէլէրի նա՛սըլ քէնտի նէֆ-

սինին խարապը իշիւն իսթիմալ էթ-  
միշ տիր:

Պու կիւն թապիսթըն գուվլէթ-  
լէրի վէ մէխանիքի իճատլար տաէմ-  
լէրի պօզմաղա վէ ախլազճա էնտիր-  
մէյէ իսթիմալ էտիլմիշտիլլէր: Ալլա-  
հըն հէր պիր ա՛թիյէսի փէրվասըզ վէ  
մէքրուհ պիր սուրէթաէ հաշմազ ի-  
շիւն սարֆ էտիլմիշ տիր: Հայաթըն  
թէա՛միւմի վէ աուիմի տազլանմաղ  
իշին վէրիլէն արզու վէ հիսսի թա-  
պիլլէր, զայրի թապիլլէ՛ սօլտա իսթի-  
մալ էտիլիպ սէֆահէթէ կէօթիւրիւլ-  
միւշ տիր: Էյէր պու կիւն մաթպաւայը  
իճատ էտէն կիւլթէնպէրկ, մաթպաւա-  
տան չըգան չիրքին վէ քիրլի շէյլէ-  
րի կէօրսէ իտի էօյլէ պիր մաքինայը  
իճատ էթտիյինէ նաւաթ օլմազ հիս-  
սինէ զահիպ օլաճազ իտի: Թէյյարէ  
իսթիւրա՛նա սէպէպ օլտն Բայթ Պի-  
րատէրլէր, պու կիւն թէյյարլէրին նէ  
մուխրիպ ալէթ հալինտէ իսթիմալ  
էտիլտիքլէրինի կէօրսէլէր իտի, անըն  
իշիւն ութանաճազլար իտի: Օլ փաք  
րուհլու Յրանքլին ուշուրմա վաւը-  
թասըյլէ քէշֆ էյլէտիյի էլէքթրիք  
վասըթտսըյլէ սինէմալարտա կէօսթէ-  
րիլէն իւրիտնլըզը կէօրսէ իտի, օնու  
քէշֆ էթտիյինէ հիճապ էտիպ, «քեսչ-  
քէ օ ուշուրմալը ուշուրմազ օլտյ-  
աւըմ», տիյէճէք իտի: Տիկէր պիր չօզ  
իսթիւրալար իշին տախի վազտա՛ էօյ-  
լէ տիր:

Էյէր պիր տաէմին սիյրէթի քէն-  
տինէ՝ վէրիլէն ֆուրսաթը ետ նէսնէ-  
յէ նաւըլ գուլլանաղընտան աշիքեար  
իսէ, պու կիւն ի սան ճիւսինին սիյ-  
րէթի լէյհինտէ տէնիլէճէք փէք ազ  
շէյ վար տըր: Ալլահ թարաֆընտան  
պիզէ զա՛նի-զա՛նի վէրիլէն իհսան վէ

պէրէքէթլէր իշխնտէյիզ, ֆազաթ Վէ-  
րէնի ասլա թա՛ղիզ էթմէյօրուզ, Հէր  
մէտհիյէյի քէնտիմիզ ալըյօրուզ, վէ  
միւսրիֆ օղուլ կիպի փէրիշանիյէթէ  
վէ աճլըղա տօղրու կիտիյօրուզ, Օ  
քիմսէլէր քի քէնտի տէհալարըյլա պէ-  
շէրիյէթէ մէխանիքի իճաալար վէր-  
միշտիւրէր, իւմիտսիզլիյէ տիւշմիշ-  
տիւրէր, Պու շէյ՝ պիր փէտէրին քէն-  
տի չօճուզընըն էլինտէ սրգըճա թութ-  
մըշ օլտուզը քէսքին պիր ուսթուրայը  
կէօրմէսինէ պէնզէր, օնու էլինտէ  
թէրք էթմէսի վէ չէքիպ էլինտէն ալ-  
մասը միւսազլի տէրէճէտէ մուճիպի  
ֆէլաքէթ տիր:

Էնճամ, տտէմլէր՝ Ալլահ թարա-  
ֆընտան պու նիսպէթէն ազ գըյմէթլի  
աթիյէլէրի քէնտի գարարլարընա իս-  
թիմալ էտէրէք, Անըն մուհապպէթինէ  
նալայըզ օլտուզլարընը իսպաթ էթ-  
տիքտէն սօնրա, տտէմի՝ քէնտի քէն-  
տինի խարապ էթմէքտէն խէլաս էթ-  
էթմէք իշիւն, սօն տէֆա օլտարազ Ալ-  
լահ թարիֆէ կէլմէզ Մուհապպէթին  
մէվհիպէսիյէ սէօլէտի: Ատէմլէրի խէ-  
լաս էթմէք իշին Ալլահըն պաշգա չա-  
րէսի գալմամը իտի, չիւնքի տիկէր  
հէփ չարէլէր պօշա տիւշմիւշ իտի: Օ,  
սէմանըն ինճուսը, պիւթիւն ալէմ ու  
ճիհանըն թաճը օլան պիրիճիք Օղլու-  
նու տտէմլէրին էլինէ թէսլիմ էթտի,

Անտ նէ՛ հափաճագլարընը կէօրմէք ի-  
շիւն: Օ տիւշիւնտի քի շիւպէսիզ օղ-  
լունա հիւրմէթ էտէճէքլէր, ֆազաթ  
քէնտիլէրին էպէտի ազապ վէ էլէմ-  
լէրինէ սէպէպ օլմագ իւզրէ անլէր  
Ալլահըն պու պէօյիւք Աթիյէսինի ա-  
լըպ, տիկէր մէվհիպէլէրիյէ նա՛սըլ  
մու՛ամէլէ էթտիլէր իսէ Անընլէ տէ  
էօյլէ մու՛ամէլէ էթտիլէր: Ալլահ պու  
եօլ իլէ քէնտի սօն ճէհա վէ մուհապ-  
պէթ չարէսինի գուլլանմըշ օլտու,  
մուհանիտ էվլատընըն պօզուզ գալպ-  
լէրինի գազանմագ իշիւն պաշգա հա-  
փաճագ պիր շէյի գալմամը իտի:  
«Պու թաշ քիմին իւզէրինէ տիւշէր  
խէն անը փարէլէյէճէք»՝ Հէր քիմ  
քի Ալլահըն պու պէօյիւք Մէվհիմէ-  
սինի ըէտտ էտէր իսէ էպէտէն մահ-  
քիւմ տիր:

Հէր պիր ֆէրտին հա գալմըն  
սէյրէթի վէ նասիպի Ալլահըն սօն Ա-  
թիյէսիյէ օլան մու՛ամէլէսինէ մէ-  
նութ ալըր: Ատէմին տիւշմիւշ օլտու-  
ղու պաթաղըգտան չըգմասը իշիւն  
պիրէճիք եօլ պու սօն մէվհիպէ տիր:  
«Հէր կիւնտն վէ քիւֆր տտէմլէրէ  
աֆվ օլունուր, ֆազաթ Րուհա (սօն  
Աթիյէ) գարշը օլան քիւֆր տտէմլէրէ  
աֆվ օլունմագ»:

Ճ. Ճ. ՍԹԻԼ

## ՔԻԼԻՍԱՆԸՆ ԷՕՍՐ ՎԵ ԱՄԵԼԻՆՏԷ ՐՈՒՅ ԻՒԼ ԳՈՒՏՍ

Րուհ իլէ մէմլու օլան Քիլիսանըն  
իտէալը անճագ վէ հալընըզ Քրիստո-  
սը էօմրտէ իզհար էտէրէք Ալլահը  
իզզէթլէմէք տիր:

Անտ լաղըմ օլան, Րուհանի էօմրէ  
մալիք օլան ազալար ալըր:

Ատէմլէրին հոյաթընտա սէմազի

խազինէ մէվճուտ իսէտէ, տնճագ Րուհ  
իւլ Գուտսիյէ թէնվիր օլունմուշ ֆի-  
քիրլէր անտէն զիգըյմէթ ինճուլար  
չըգարապիլիւրլէր: Զիւնքի անըն կիր-  
միշ օլտուզը գալպ, հէր մէվսիմտէ  
կիւլ կիպի ըաիհա սաշար. Քրիստոս  
իլէ տամա վէ չըպուզ ըապըթասընը

հըֆզ էտէրէք, Անը էօմրտէ ալէնէն իզհար էտէր:

Օ միւսինին իսթիտաւարընը թագաւիս վէ թէչվիգ էտէր, զիրա քէնտիսի պիզգաթ հապիգի թարիգ, պաւիս ի սէլամէթ վէ մէնալը մուհապպէթ օլան հայաթը էպէտիյէ տիր:

Ալլահ անըն վասըթասըլլա Բիլիսալը թէչքիլ վէ թանզըմ էտէր: Բիլիսա իսէ քէնտի մուհիթինտէ նուր վէ թուգ օլապիլմէսի իչիւն՝ Րուհ իւլ Գուտսուն տաւիլի գուզվէթ վէ տէլլաթինէ միւհիթաճ տըր:

Անա մալիք օլան պիր քիլիսա, առէմլէրի հազիգաթըն թարիգինէ իրչատ էտէր. մուհապպէթին միւհիթ օվալարընա գըլաղուզլար վէ անըն թէէսիրիյէ իտարէ օլունանլար, էվլատ Ուլլահ թէսմիյէ օլունմաղա լալըգ օլուրլար: Իշթէ Բիլիսանըն վէ պիւթիւն իպտտէթլէրին տսըլ մաղաէտ վէ զայէսի տէ պու տըր:

Տէրունի հայաթտա տէրինլէշմիշ օլան Բիլիսանըն մուհիթինին ուֆուզը նամահտուտ տըր: Պիւթիւն առէմլէրին իսէլասը անըն միւսատը տըր: Անըն փէնճէրլէրինտէն բուհանի փէրթէվլէր աքս էտէրէք սէմալի չէմսի իզհար, վէ մուհիթինտէ պուլունան իսոչ բաիհալը բէնկեպրէնկ չիչէքլէրի իլան էտէր: Անըն իտէալը՝ հայաթը տէ՛յիլ վազ, իւա պիլ ֆիլի իզհար էթմէք տիր:

\* \* \*

Րուհանի հայաթտա քէօքլէշմիշ վէ սէմալի պաղչէվանըն պաղուսուլլէ թիմար օլունմաղտա օլան քիլիսանըն իմքեանիյէթլէրի պիհիսապ տըր:

Զիրա բուհանի գուզվէթ, պաթընի ճէսարէթ վէ խարիճի մէյվէ իզհար էտէր: Անըն ազալարընըն հայաթը ճօշան պիր ըրմաղա պէնզէր:

Զիրա Բուհա տէմի իհես էտէր (Բ. Կորն. 3. 6):

Սու թապիի սուրէթլէ քէնտի մէնպաընըն իրթիֆաընա գատար եիւքսէլէպիլիր:

Նազարէթլի Յիսուս Փէտէրին իրտաէթինի իճրա էտէրէք, էպէտիյէթին թարիգինի պիզէ պէյան էյէլտի: Օ Գեթսեմանի տուասընտա Գողգոթա ֆիլթիւհաթընը զաղանտը, վէ պիրաղտան խաչտա, էլէմ վէ իսքէնճէլէրալթընտա, մուհապպէթ, հիլմիյէթ վէ թէվաղուըն սէմթիւրրասընա եթիւչէրէք, բուհունըն տէրինլիյինի, գալպինին հիսսիյաթընը վէ չախսիյէթինին քեամիլլիյինի իզհար էյէլտի:

Իշթէ քրիսթիյանըն՝ վէ քիլիսանըն նամահտուտ օլան իմքեանիյէթլէրինին նուսունէսի: Էյէր անըն ֆիքրինէ վէ գալպինէ Րուհ իւլ Գուտսուն սէմալի չիյի, չաֆաղըն սիւքիւնէթինտէ էնմէքսէ իսէ, մութլազա մահաուլտար գըլաճագ տըր:

Րուհ իւլ Գուտսուն մէյվէլէրի օլան մուհապպէթ, մէսէրրէթ, սէլամէթ, թէէննի, լութֆ, խայրխալըգ, սըտգ, հիլմ վէ զապթը նէֆա (Ղալ. 5. 22), էօմրտէ իզհար օլունաուղըն իսպպէթտէ, Բրիստոս չախստա սուրէթփէզիր օլարագ, անը մէնպաա տողրու եիւքսէլտիր: Պու հայաթ անճա՛գ տտէմի Ալլահըն սիւքինէ իտխալ էտէր:

Պէօյլէլէր, սիւքիւնէթլէ՝ էօմրլէրինին խօշ բաիհասը վէ լաթիֆ թէէսիրիյլէ մէլէքիւթիւ թէպչիր էտէրլէր իսէտէ, պու գատարըյլէ իքթիֆա էթմէյէլէք, Նիլին էթրաֆա նիմէթլէր սաչտըղը կիպի, քիլիսանըն տալիլի գուզվէթինի թէրթիպ էտէրէք՝ օրատա մէվճուտ օլան իմքեանիյէթլէրի՝ խարիճտէ օլանլարը Բրիստոս իրչատ էթմէյէ միւհսպիր պիր վասի:

թա հալինաէ իսթիմալ էտէրէք, մու-  
ճիպ ի պէրէքէթ օլուրլար:

Պու կիպի ազալարտան միւրէք-  
քէպ օլան քիլիսա, Րուհ իւլ Գուտսլէ  
մէմլու օլմուշ օլարագ, մուհապպէթ-

տէն նէչէթ էտէն խըզմէթ թարիգիլէ  
ստէմլէրի խէլասա սէվզ էտէր:

ՊԱՏ. Կ. ՖԱՐԱՃԵԱՆ

(Մապուսը վար)

## ԹԷՍԼԻՄ ԷՏԻՊ... ԹԷՎԷՔՔԻԼ ԷՅԼԷ

Մէզ. 37.5 Զօգ գըյմէթլի պիր  
այէթ տիր: «Եօլուըն Րապպա թէսլիմ  
էտիպ, Անա թէվէքքիւլ էյլէ, Օ տա-  
խի միւրէսսէր էտէճէք տիր»: «Եօլու-  
ըն Րապպա թէսլիմ էյլէ» տէմէք,  
«Հէր չէյի Անա կէթիրմէք» տէմէք  
տիր: Կիւճիւլքէրիմիդի թէճրիպէլէ-  
րիմիդի, միւշքիւլ մէսէլէլէրիմիդի, քէ-  
տէրլէրիմիդի, էլէմ վէ մէյուսիյէթի-  
միդի հէփ Անա կէթիրմէք տէմէք  
տիր: Նէ կէօնա Ֆէնա չէյ վուգու  
պուլտուղուհաա, նէ զէման հան-  
լըշ տնլաշլըրըրմըզաա, վէ հէր չէյ  
գարանլըգ կէօրիւնիւպ հոնկը թա-  
րաֆա տէօնէճէյիմիդի պիլմէտիյի-  
միդ էսնաաա, իյթէ օ զէման տըր քի  
հէր չէյի Անըն էլլէրինէ թէսլիմ էթ-  
մէլիյիզ, Րապպա իթիմաաըմըզ օ-  
լուպ, Անա թէվէքքիւլ էթմէզաէք,  
թապիի պուհու հափաազ միւմքիւն  
տէյիլ տիր:

Լաքին հէր չէյի Անա թէսլիմ  
էթտիքաէն սօնրա պիզ թէվէքքիւլ  
էթմէքաէ տէվաա էթմէլի իզ, Զօգլար  
քէնտիլէրինի վէ քէնտի հօլլարընը  
Րապպա թէսլիմ էտէրլէր, լաքին սօն-  
րա կիրիֆթար օլտուգլարը կիւճիւլք-  
լէր վէ մէսէլէլէր իչիւն թէլուշ էթ-

մէքաէ տէվաա էտէրլէր: Վէ վուգու  
պուլան միւշքիւլթար իչիւն չօգ Հն-  
տիչէ էտիպ շիւպհէլէրէ զարգ օլուր-  
լար: Պու իմանըն իչի տէյիլ տիր:  
Հէր հոնկը չէյի Րապպա թէսլիմ է-  
տէր իսէք, «նէթիճէսի էյի օլաճազ»  
տէմէյի էօյրէնմէլի իզ, Սիւքիւնէթ  
վէ սապրիլէ պիզիմ իչիւն հափաճա-  
ղը իչէ պէքլէմէյի էօյրէնմէլի իզ:

«Օ տախի միւրէսսէր էտէճէք  
տիր» իպարեսի «Օ իչլէյէճէք, ֆաալի-  
յէթէ պալլալաճազ տըր» թէրճիմէ օ-  
լուհմալը տըր: Օ պիզիմ իչիւն տէր-  
էօնաէ էտէր: Իման վէ թէվէքքիւլլէ  
Անա ինթիրաա էտէրսէք, օ տախի Ա-  
նա թէվէքքիւլ էտէնլէրէ ինթիրաա  
էտէր: Օ պիզիմ մէմուլ էթտիյիմիզ  
կիպի իչլէմէզ, լաքին հէր նէ քի հա-  
փար իսէ հազգ իւզրէ վէ պիզիմ խալ-  
րըմըզ իչիւն հափար: Ահ 3000 սէնէ  
էվվէլ հազըլմըշ օլան պու այէթէ տա-  
յանմաղա վէ տնը ամէլէ գօմաղա նէ  
գաաար ինթիյաճըմըզ վաար տըր: Հէր  
թարաֆտան կիւճիւլքլէր չօղալա պի-  
լիր, հէր չէյ տլթ իւսթ կէօրիւնիւր,  
լաքին Օ տալա թէպաիլ օլմազ «իլէ-  
լէպէտ ալի տիր»:

Ա. Կ. ԿԵՊԸԼԱՅՆ

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷ

Նկատելով որ Անգղիոյ մէջ պատե-  
րագրի առթիւ մեծ ֆաշիստները մթու-  
քեան մէջ կը քաղուին գիշերները, Էսին-  
պուրկի Մեքսական եկեղեցին խմբերի  
դրութիւնը որդեգրած է երեկոյեան ժո-  
ղովներուն բերելու սանելու անոնք ո-  
րոնց աստիճանով չեն զգար ինքզինքնու-  
ն: Այս գործը կը կատարէ եկեղեցիին երի-  
տասարդութիւնը, կը գրէ անգղիական  
երէր մը:

§ Մեծն Բրիտանիոյ ոգեհարցութեան  
աղանդաւորները մեծ պատերազմի աւել-  
ջանաքի մեծ գործունէութիւն ունեցան,  
յուրեր բերելով պատերազմի դաշտին մէջ  
մեռած զաւակներէն, անուսիկներէն եւջն:  
Մակալս այս պատերազմին իրենց համար  
հետապստները չխուր է, եւ կ'ողբան քի  
իրենց համար պատեհութիւնը իրենց իսկ  
ձեռքով կործանուած է: Նիւլվ Բլիֆի  
կ'ըսէ. «Ոգեհարցելը, սեւ օրեր ապրե-  
ցան անցեալ շաբաթ, իրենց հաւասք...  
մարդկայիտ կարողութեան վեր մեծ  
փորձի ենթարկուած է, որովհետեւ նա-  
խատեսած էին քի Անգլիա պատերազմի  
պիտի չնասնակցի: Ապագան տեսնելու ի-  
րենց կարողութիւնը մեծ հարուած ըն-  
դունած է»:

§ Անցեալ տարուան Հոկտեմբեր ամ-  
սուն մէջ հրատարակուեցաւ գիրք մը՝  
«Համաթարհային Սբ. Գիրք» (The  
Bible of the word) անունով Մր. Բո-  
պիրք, Պաշու կոչուէ: Անիկայ կը հաւա-  
սայ՝ քի այս գիրքը կը համապատասխա-  
նէ բոլոր մարդկային ցեղին կրօնական  
պէտքերուն, ինչու որ, անիկա կը պա-  
րունակէ մօտաւորապէս բոլոր կրօնի  
գիրքերու մասեր, եւ կը բաղկանայ  
1415 էջերէ եւ կը պարունակէ 600,000  
բառեր: «Համաթարհային Սբ. Գիրք» ի  
մէջ կրնան գտնուի առասպելներ, փիլիսո-  
փայութիւններ եւ երգեր՝ աւելուած պոե-  
տայականութիւններ, կունքոկիտականու-

թեաններ, հնդկ կրօնիներ, գրադաշտականու-  
թեաններ եւ այլն: Գիրքը իսկապէս «Համ-  
աթարհային Սբ. Գիրք» անունով կը  
կրէ, ինչու որ, անիկա ֆրիսունեայ չէ:  
Մր. Պաշու այս գիրքին մէջ դրած է Սբ.  
Գիրքէն ալ հասուածներ, շատ իրեն, ան-  
կէ հաւած ըլլալով ոչ-հիմնական կէտեր  
ու կրկնութիւններ: Սբ. Գիրքը որ կը  
բաղկանայ 750,000 բառերէ որոնք պակ-  
սեցնելով 225,000 բառ դրած է սոյն  
գիրքին մէջ: «Եւ երբ մէկը այս մարգա-  
րեան գիրքին խօսքերէն բան մը  
պակսեցնէ, Աստուած ալ անոր բաժինը  
պիտի պակսեցնէ կենաց գիրքէն եւ Սբ.  
Քաղաքին որ այս գիրքին մէջ զըր-  
ուած են»:

§ Մասնաւ ապաշտութիւնը, այժմ  
սկսած է Թրանսի, Անգլիոյ եւ Ամե-  
րիկայի մէջ ալ: Այս մոլորութեան հե-  
տեղները՝ իրենց պաշտամունքի աւել-  
կը կատարեն զարեղի, անհամեստ արա-  
րողութիւններ, զորս կարելի չէ յիշել  
այստեղ: Անոնք իրենց պաշտամունքը կը  
կատարեն Կիրակի գիշերները, որպէսզի  
շատեր կարենան ներկայ գտնուիլ: Արա-  
րողութեանց բոլոր երեւոյթները անբա-  
րոյական են: Ուտեղներ, արեւիկէն եւ պա-  
րեղիկէն ետք տարօրինակ ձայներով կ'սկսին  
աղօթել խոշոր այծի մը մորթը վրան  
հագած մարդու մը առջեւ իբր քի չար  
ոգի ըլլար ան: Այս պաշտամունքներուն  
յամայնոյցներէն շատեր՝ այսօր կը գտնուին  
յիմարանցներու մէջ: Մասնաւ իսկա-  
պէս իր ժամանակին լրացած ըլլալուն  
տեղեակ՝ կը ջանայ իր բոլոր ոյժով մո-  
լորեցնելու մարդկութիւնը:

§ Կ'ըսուի քի՝ Մոսկուայի մէջ տա-  
կան կը գտնուին մօտ 400,000 հաւա-  
սացեալ ֆրիսունեաներ:

§ 8000 է աւելի ռուսներէն Աստուա-  
ծաշունչ ցրուած է Խորհրդային Ռու-  
սիոյ սահմանակից երկիրներուն մէջ:

## ՆՈՒՐԱՏՈՒԹՅՆՆԵՐ

- Քոյր Շողակաթ Զպուգնեան 10 Ն. Դ. կը նուիրէ «Աւետ. Զայն» ի Ֆոնսին:  
 — Տոբ. եւ Տիկին Ա. Շաֆարեան 20 Ն. Դ. կը նուիրեն «Աւետ. Զայն» ի Ֆոնսին վասն խնդակցութեան, քոյր Հ. Սարաֆեանի բնդ եղբ. Ս. Դաւթեանի նշանախօսութեան առթիւ:  
 — Նոյն առթիւ եւ նոյն նպատակին քոյր Ն. Քիւրճեան կը նուիրէ 20 Ն. Դ.

## "ՔՐԻՍՏՈՍ ՄԵՐ ՄԻՋՆՈՐԴԸ"

Սոյն գիրքը հրապարակ ելած է արդէն: Եթէ մէկը կ'ուզէ գիտնալ կեղծ միջնորդներու մասին — հետաքրքրական գլուխ մը իսկապէս — եթէ մէկը կ'ուզէ տեղեկանալ նախկին դարերու մէջ ծագում առած մոլոր վարդապետութեանց որոնք հրկաւ ասեմ վեհի նիւթ դարձան եկեղեցական համաժողովներու: Եթէ մէկը կ'ուզէ հասկնալ լիովին Քրիստոսի միջնորդութեան պատճառներն ու եռփունը, որուն ուսումնասիրութիւնը Քրիստոսը յանձնուցաւ կը մեծցնէ ընթերցողին աչքին, պէտք է կարգաւ այս նոր եւ հետաքրքրական գիրքը որ կը բաղկանայ 304 էջերէ: Դիմե՛ք 10 Ն. Դ.

Դիմել հեղինակին հետեւեալ հասցեով՝

Rev. THEODORE Y. DAGHLIAN

Armenian Evangelical Church

American Mission Building — CAIRO, Egypt.

## ՄԵՐ ՔՈՎ ԿԸ ԳՏՆՈՒՆ ՇԵՏԵՒԵԱԼ ԳՐՔՈՅԿՆԵՐԸ

|                                       |                 |             |
|---------------------------------------|-----------------|-------------|
| 1. Զարլի Դըլզըն . . . . .             | 24 էջ . . . . . | Դիմ 1 Ն. Դ. |
| 2. Սամուէլ Մօրիս . . . . .            | 32 » . . . . .  | » 1 »       |
| 3. Գործք Պիղատոսի . . . . .           | 24 » . . . . .  | » 1 »       |
| 4. Իգնատիոս . . . . .                 | 20 » . . . . .  | » 1/2 »     |
| 5. Արքեպիսկոպոսներ եւ աղօթք . . . . . | 80 » . . . . .  | » 5 »       |

Վերոյիշեալ գրքիկները համեմատելի, խիստ հետաքրքրաւոր եւ հոգեւորապէս պատմութիւններ են: Դիմել խմբագրութեան հասցեին:

## ԹԵՐԹԻՍ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

|                             |             |
|-----------------------------|-------------|
| Եգիպտոս՝ . . . . .          | 25 Ն. Դ.    |
| Ամերիկա՝ . . . . .          | 1 1/2 Տօլար |
| Ֆրանսա եւ Սիւրիա՝ . . . . . | 30 Ֆրանկ    |

Նկատի ունենալով մեր հայրենակիցներէն ռմանց նիւթական ունձուկ վիճակը, յօժար ենք այդպիսիներուն զեղչեալ գնով մը դրկել թերթը, եթէ առ այդ մեզի իմացնեն անձամբ կամ մեր գործակալին միջոցաւ:

**ՈՒՇԵՆԴՐՈՒԹՅՈՒՆ.** — Բոլոր նշանակաւ առաքուներ, յօդուածներ եւ դրամականութիւններ պէտք է հասցեագրուին հետեւեալ կերպով. —

K. T. SARIAN

2, Rue Ahmed Pacha Hasanen — Shoubra, CAIRO (Egypt).